

*Մարգարյան Ս.Ա.*  
Կյանքի իմաստի հարցի շուրջ

Փիլիսոփայության և մյուս գիտությունների հիմնահարցերից մեկը եղել և մնում է մարդու էության, նրա կյանքի իմաստի և զարգացման հիմնահարցը, որը ուսումնասիրման պրոցեսում գիտնականները հանդիպել են լուրջ դժվարությունների։ Բանն այն է, որ առանձին մասնավոր գիտություններ մարդու էության մասին տալ են գիտելիքներ, որտեղ հիմնականում խոսվում են մարդու կենսունակության և օրգանիզմի առանձին կողմերի, գիտակցության ու բնավորության մասին, բայց ոչ մարդու մասին որպես ամբողջություն։

Փիլիսոփայության պատմության մեջ հատուկ տեղ է զբաղում 19-րդ դարի առաջին կեսը, երբ մարդու էության վերաբերյալ շատ փիլիսոփաներ շրջադարձ կատարեցին, նրան դիմելով որպես «կենդանի» մարդ, որպես «կոնկրետ» մարդ, որը գոյություն ունի բնության մեջ /Ս. Կերկեգոր, Լ. Ֆոյերբախ/։ Մարդու վերաբերյալ առաջ քաշվեցին նոր սկզբունքային տեսակետներ։

Դեռ իր ժամանակին Ֆոյերբախը, քննադատելով փիլիսոփայական այն միտքը, որի համաձայն մտածողությունը գերմարդային էություն է, եկավ այն եզրակացության, որ կեցության նկատմամբ մտածողության հարաբերության հարցը մարդու էության հարցն է, քանի որ մտածում է միայն մարդը։ Ուստի փիլիսոփայությունը պետք է լինի մարդաբանություն՝ այսինքն ուսմունք՝ մարդու մասին։ «Կեցության և մտածողության միասնությունը ճշմարիտ է և իմաստ ունի այն ժամանակ, - գրում է Ֆոյերբախը, - երբ այն միասնության հիմք, սուբյեկտ է վերցվում մարդը»։

Մաղը, կազմելով բնության մասնիկը, ամբաժանելի է նրանից, հետևաբար հոգևորը չպետք է հակադրվի բնությանը, որպես նրանից վեր բարձրացող իրականություն։

«Նոր փիլիսոփայությունը, մարդու ներառյալ և բնությունը որպես մարդու հիմք դարձնում է փիլիսոփայության միակ, համապարփակ գիտություն»<sup>2</sup>, գրում է Ֆոյերբախը։ Դրանով նա ձգտում է մշակել հայացքների մատերիալիստական մի համակարգ՝ մարդու գիտական ֆիզիոլոգիայի ու հոգեբանության հիման վրա։

Սակայն մատերիալիստական փիլիսոփայության առարկայի նման ընթերցումը կրում է միակողմանի բնույթ։ Ֆոյերբախի մարդաբանական փիլիսոփայության բնորոշ առանձնահատկությունը մարմնի և հոգու դուալիզմի ժխտումն է։ Նա ընդունում է սուբյեկտիվի և օբյեկտիվի, հոգեկանի և ֆիզիկականի, մտածողության և կեցության միասնության մատերիալիստական ընթերցումը։

Ֆոյերբախի մարդաբանական փիլիսոփայությունը կրում է միակողմանի բնույթ, որովհետև մարդու էությունը նա ընթերցում է վերացականորեն, պատմական որոշակի հասարակական հարաբերություններից դուրս։ Նա սահմանափակված մարդու զգայական բնության, մարդկային գործունեության զգայական բնույթի, բոլոր մարդկանց մարդաբանական միասնության մատնանշմամբ։ Այսպիսով, մարդու պրոբլեմը Ֆոյերբախը ուսումնասիրում է հասարակական հարաբերություններից դուրս, նրան դիտելով որպես միայն կենսաբանական էակ։ Այդ տեսակետից իր ժամանակին Մարքսը քննադատելով Ֆոյերբախին, նրա նկատմամբ հայտնի թեզիսներում նշում է, որ մարդը իր էությանը բիո-սոցիալական էակ է, ու նա հանդիսանում է հասարակական հարաբերությունների միասնություն։

Մարդը իրենից ներկայացնում է բիո-սոցիալական կառուցվածք, որն ընդգրկում է մարդու կենսունակության լայն զամմայի կողմեր՝ սկսած ֆիզիոլոգիականից մինչև սոցիալականը։ Չնայած մարդու բնական հիմքը կազմում են նրա կենսաբանական հատկությունները, այնուամենայնիվ մարդու՝ իբրև սոցիալական էակի բնորոշ գործոնը չեն հանդիսանում նրա կենսաբանական որակները, այլ սոցիալական նշանակություն ունեցող որակները։ Այդ որակների միակցությունը կազմում է անհատ հասկացությունը։

Մարդու էությունը սերտորեն կապված է գոյության հետ: Մարդու ռեալ կերպարը/նրա գործունեությունը / չի հասցնում էության կատեգորիային, քանի որ մարդու էության մեջ մտնում է նաև նրա կոնկրետ պատմական գոյությունը: Գոյություն ունենալու հասկացությունը հարուստ է, քան էությունը, որովհետև այն իր մեջ ներառում է ոչ միայն մարդու էական ուժերի դրսևորումը, այլ և նրա սոցիալական, կենսաբանական, բարոյական, հոգեբանական, տրամաբանական որակները հատկապես նրա ամենօրյա կենսագործունեությունում: Մարդու գոյությունը իրենից ներկայացնում է իր էության դրսևորման ձևը: Մարդու էությունը խիստ կապված է ազատության հիմնահարցի հետ, որը հանդիսանում է փիլիսոփայության լուրջ ու կարևոր հիմնահարցերից մեկը:

Հասարակության զարգացման պատմությունը միաժամանակ նրա ազատության և մշակույթի պատմությունն է: Մշակույթի անցած ճանապարհի յուրաքանչյուր առաջընթաց միաժամանակ քայլ էր դեպի ազատություն: Մարդկային էական ուժերի շարքում ազատությունը զբաղեցնում է հատուկ տեղ, քանի որ առանց դրան մարդու չի կարող իրականացնել նախատեսված նպատակը, ձևավորվել իբրև անհատ: Ազատության պահանջմունքը բնական բնույթ ունի մարդու մեջ, այն կապված է նրա էության հետ:

Ազատությունը հասարակական զարգացման պրոդուկտն է, նրա յուրացման աստիճանը կախված է կոնկրետ պատմական պայմաններից: Այդ պատճառով ազատության չափը մտնում է մարդ հասկացության մեջ: Մարդը չի օգտվում անսահման ազատությունից, այլ միայն նրա որոշակի չափից: Ազատության չափը կախված է արտադրողական ուժերի զարգացման մակարդակից, մարդու կողմից օբյեկտիվ օրենքների ճանաչման աստիճանից, այս կամ այն հասարակության սոցիալ-քաղաքական համակարգից:

Աճծը իր ազատության պահանջը զգում է նախ և առաջ որպես անձնական զգացմունք, որը դրսևորվում է նրա կողմից կատարվող գործունեության մեջ: Քանի որ մարդը գործնական էակ է, ապա ազատության ընտրությունը անցնում է իր ավելի բարձր աստիճանի, այսինքն ազատության լուծման, այնուհետև գործունեության ազատությանը: Մարդու գործունեության մեջ հատուկ դեր են խաղում նրա դրդիչները/իմպուլսները/: Ներքին ազատությունը ինքնուրույն է ոչ թե հարկադրական, այլ համաձայն իր համոզմունքի է դրսևորվում: Ներքին ազատությունը դա մարդկային յուրահատուկ ընտրական և համաձայնեցված, գիտակցված ակտիվությունն է: Մարդու կյանքը և բարոյական ուժերը ուղղված են նպատակալաց գործունեության: Այդ պրոցեսը ինքնուրույն ընտրության հնարավորությունն է, ինքնուրույն վճիռ կայացնելը և այն կյանքում իրականացնելն է: Ըստ էկզիստենցիալիզմի, առօրյա կյանքում մարդը միշտ չէ, որ գիտակցում է իրեն որպես էկզիստենցիա: Չեռք բերելով ինքն իբրև էկզիստենցիա, մարդն առաջին անգամ ձեռք է բերում և իր ազատությունը: Ազատությունն այն է, որ մարդը հանդես չգա իբրև մի իր, որը ձևավորվում է բնական կամ սոցիալական անհրաժեշտության ազդեցությամբ, այլ «ընտրի» ինքն իրեն, ձևավորի իրեն իր յուրաքանչյուր գործունեությամբ ու վարմունքով: Դրանով իսկ ազատ մարդը պատասխանատվություն է կրում իր կատարածի համար և գնալով ավելի լավ է ճանաչում ինքն իրեն: Ըստ Բեթդայակի, իր շուրջը կատարվող ամեն ինչի համար մեղավորության զգացումը ազատ մարդու զգացումն է:

Այս ամենից զալիս ենք այն եզրակացության, որ մարդու ազատությունը պարփակված պրոբլեմ չէ, այն կապված է արտաքին աշխարհի և մարդկային ամբողջ գործունեության հետ: Հասարակության զարգացման օրենքները վերջին հաշվով ճանապարհ են հարթում իրենց համար, բայց ոչ առանձին դեպքում, այլ բազմաթիվ անհատական որոշումներով: Տվյալ դեպքում մարդիկ միշտ չէ, որ տաբերայնորեն հետևում են արտաքին անհրաժեշտությանը, նրանք օժանդակում կամ դիմադրում են նրան, դրանով իսկ ցուցաբերում են իրենց ազատությունը, կամքը և գիտակցությունը: Այդ նշանակում է, որ միշտ հայտնի ազատ տեղ գոյություն ունի հարցի անհատական լուծման համար: Մարդիկ իրենք են ստեղծում իրենց պատմությունը, չնայած համախ ոչ իրենց կամքով: Անձնավորության ազատությունը սերտորեն կապված է հասարակության ազատության

հետ: Միաժամանակ հասարակության ազատ զարգացումը կախված է նրա յուրաքանչյուր անդամի ազատ զարգացումից, որը լուրջ դեր է խաղում կյանքի իմաստի հարստացման գործում:

Այժմ ցույց տանք, թե ինչնումն է կայանում կյանքի իմաստը: Մարդու կյանքի իմաստի հարցը խիստ կապված է մարդու, որպես ցեղական էակի, նրա բնության և էության հասկացման առանձնահատկության հետ: Մարդկային ցեղը որպես պատմականորեն մեկը մյուսին փոխարինող մարդկային սերունդներ, ունի յուրահատուկ գծեր, որոնցով նա տարբերվում է ուրիշ հոտերից: Մարդկային ցեղի այդ որակական տարբերիչ գծերից է բխում, որ մարդիկ ձգտում են գեղեցիկ ճանաչման, ստեղծագործական գործունեության և բազմակողմանի զարգացման, համամարդկային բարոյականության որոշ նորմեր ունենալուն և այլն: Սակայն դրանից չի կարելի եզրակացնել, որ գոյություն ունի որևէ մարդկային անփոփոխ բնություն, որի վրա կարելի է հենվել կյանքի իմաստի բնորոշման հարցում: Ընդհակառակը, ամբողջ պատմությունը վկայակոչում է մարդու բնության անընդհատ փոփոխման մասին:

Նախկին անհատականորեն երևան եկած մարդը չի կարող հասկանալ իր կյանքի իմաստը, այլ այն կարող է կատարել միայն իրեն ուրիշների, իր նմանների հետ համեմատելու դեպքում, երբ նրա մոտ արթնանում է իր «եսի» զգացումը, մարդկային արժանապատվությունը, երբ նա մտածում է իր կյանքի օբյեկտիվ նշանակության մասին:

Յուրաքանչյուր պատմական դարաշրջանում հասարակության առաջ ծառանում են որոշակի խնդիրներ, որոնց լուծումը անմիջականորեն ազդում է մարդու ինացության վրա, թե ով է նա, որն է նրա կյանքի էությունը: Որքանով փոխվում են մարդկանց կյանքի նյութական և հոգևոր պայմանները, նրանց սոցիալական և մշակութային պահանջները, հասարակության դասակարգային կառուցվածքը, այնքանով էլ փոխվում են մարդկանց պատկերացումները կյանքի իմաստի մասին: Սակայն եզակի փորձեր չեն կատարվել կյանքի մշտական իմաստը բնորոշել ու բոլոր մարդկանց համար, բոլոր ժամանակների համար: Որոշ բարեգործներ կյանքի իմաստը տեսնում են «Ճշմարտությանը, բարուն» ծառայելու մեջ, մյուսները մարդկանց կենսաբանական պահանջմունքների բավարարման մեջ /«ձգտել հաճույքի»/: Որոշ մարդիկ կյանքի իմաստը տեսնում են նրանում, որ մարդ ծնվում է մահանալու համար /Էկզիստենցիալիզմ/ և այլն:

Սակայն պետք է նշել, որ մարդիկ կյանքի իմաստը չեն կարող նախօրոք գուշակել և այն կապել մարդկանց ինչ-որ գերբնական ուժերի հետ, այլ որ մարդիկ իրենց կյանքի իմաստը իրենց են ստեղծում: Սակայն այդ չի նշանակում, որ տվյալ իմաստը մարդ ստեղծում է ըստ իր կամքի, հետևելով միայն իր անհատական շահերին, կամ անգիտակից բնազդներին, ներքին ինտիուցիայի և այլ:

Դասակարգային հասարակարգերի պատմությունը ցույց է տալիս, որ տարբեր դասակարգերի ներկայացուցիչները կյանքի իմաստը հասկացել են տարբեր ձևերով՝ համաձայն նրանց պահանջմունքների, շահերի ու նպատակների, որոնք պայմանավորված են նրանց հասարակական դրությամբ: Շահագործողական հասարակարգերում շահագործող դասակարգի մարդկանց մոտ ստեղծվում են կյանքի իմաստի հասկացման անհատապաշտական, եսասիրական, սպառողական բնույթ կրող պատկերացումներ: Դրա հետ միասին պատմությունը և ժամանակակից հասարակական պրակտիկան հարուստ է կյանքի իմաստի այնպիսի հասկացման օրինակներով, երբ, մարդիկ պասիվորեն չեն հարմարվում տարերայնորեն գործող օրինաչափություններին, որոնց գործում են հասարակական կյանքում, այլ իրենց կյանքի իմաստը տեսնում են, որպեսզի փոխեն գոյություն ունեցող իրավիճակը՝ համաձայն իրենց իդեալների, որոնց ապահովում են նրանց ավելի լիարժեք և բովանդակալից կյանքը:

Մարդու կյանքի իմաստը բացահայտվում է նրա բազմակողմանի գործունեությամբ՝ աշխատանքում, դաստիարակության ասպարեզում, ընտանիքում, գիտությամբ զբաղվելու, հասարակական ակտիվ գործունեության մեջ և այլն: Ի դեպ, աշխատանքը և արտադրությունը ինքնամպատակ չեն, այլ անհրաժեշտ պայման և ռեսուրս են օբեկտիվ պայմաններ ստեղծելու համար, որպեսզի յուրաքանչյուր մարդ

կարողանա դրսեվորել իրեն, ընդլայնել իր ընդունակությունները, բացահայտել իր տաղանդը, այսինքն որպեսզի նա ռեալ հնարավորություններ ունենա ազատ զարգանալու որպես ստեղծագործող, գործունյա անհատ: Միաժամանակ պետք է նշել, որ ոչ աշխատանքն ինքն իրեն, ոչ անհմատ զբաղմունքը ինքն իրեն բավական չեն, որպեսզի մարդու կյանքին տան իմաստ, եթե նրա գործունեության հիմքում ընկած չեն առաջավոր բարոյականության սկզբունքները, եթե նա ոգևորված չէ հասարակական նշանակություն ունեցող իդեալներով:

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ կյանքի իմաստի ճիշտ հասկանալը ձևավորվում է այն ժամանակ, երբ մարդ կարողանում է տարբերել ճիշտ և կեղծ արժեքները, գիտակցում է, որ մարդու ձգտումը ընթանում է անձնական և հասարակական չափերի համատեղությամբ: Կյանքի ավելի խոր իմաստը կայանում է նրանում, որ մարդ կարողանա բազմակողմանիորեն զարգացնել իր ընդունակությունները, իր գործողությամբ նպաստի մարդկանց համար բարիքների ստեղծմանը: Մարդու նման գործունեությունը ճանաչվում է մյուս մարդկանց, հասարակության և կոլեկտիվի կուլմից: Այն միաժամանակ մարդուն պատճառում է խորը բավարարվածություն և անձնական երջանկություն: Բայց ինչպիսի իմաստ ունի մարդու կյանքը, եթե նա գիտե, որ մահկանացու է: Ըստ որոշ փիլիսոփաների կարծիքի, մարդկանց բոլոր ձգտումները բարօրության համար, պայքարը լավ ապագայի համար, գիտության և տեխնիկայի զարգացումը, այդ ամենը ոչնչություն է «մահվան գուշակության» առաջ: Իհարկե, մահվան պրոբլեմը կարևոր է, սակայն նրա բացատրումը պետք է կապել կյանքի հետ: Կյանքը և մահը բացառում են մեկը մյուսին, բայց ոչ բացարձակ, քանի որ մահը անհրաժեշտ մոմենտ է հանդիսանում, օրգանիզմի գործունեության օրինաչափ արդյունքը: Կյանքի բացառումն իր էությանը պարունակվում է կյանքում, այնպես որ կյանքը ճիշտ իմաստավորում է իր անհրաժեշտ արդյունքներով, որում եզրակացվում է միշտ նրանում սաղմնային վիճակում-մահով:

Այն բանի ինքնագիտակցումը, որ մարդ միայն ապրում է մի անգամ, որ մահն անխուսափելի է, հայտնի չափով խթանում է մարդու ակտիվությանը, մշտապես նրան վերադարձնում է կյանքի իմաստի հարցին, իր ընդունակությունների իրականացման հնարավորությանը, իր կոչմանը և այլն: Մարդու կյանքի որոշակի սահմանները ստիպում են նրան գործել, որոշում ընդունել ուղղակի հիմա, այլ չհետաձգել իր որոշումը և գործունեությունը մինչև անվերջության, իր ուժերը ծախսել անիմաստ: Սակայն մարդը գործում է ոչ թե նրա համար, որ կանխատեսում է մահվան անխուսափելիությունը: Մարդկային արարքների շածիչ ուժերը թաքնված են իր էական պահանջմունքների բավարարման անհրաժեշտության մեջ: Այդ պատճառով, չնայած մարդ պետք է ինչի իր մահվան մասին, բայց այդ չի նշանակում, որ մահվան պատկերի առաջ նրա կյանքը իմաստ չունի: Մարդկային հասարակության պատմությունը ժխտում է դա: Զե որ մարդու իմաստությունը չէ, որպեսզի միշտ լինի մահվան մասին մտքի ճնշման տակ, այլ կյանքի մասին ունեցած մտորումներում: Դեռ հին փիլիսոփա Էպիկուրը նշել է, որ մահը մարդու համար ոչինչ է, որովհետև երբ կյանք կա-մահ չկա, իսկ երբ նա վրա է հասնում, մենք արդեն չկանք: Այդ նույն միտքը նշել է նաև Լ.Ն.Տոլստոյը, ըստ որի մարդկային կյանքը գիտակցություն է, եթե վերջինս կա մարդու մոտ, նա դեռ չի մահացել, իսկ եթե մարդու մոտ գիտակցություն չլինի, ապա նրա համար միևնույն է: Վերը նշված հարցերի լուծումը արտացոլել է Լ.Ն.Տոլստոյի աշխարհայացքի հակասականությունը: Մարդու ինքնագիտակցումը իր մահվան անխուսափելիության մասին, անկասկած տխուր է նրա համար, իհարկե նաև ողբերգալի: Սակայն այդ ողբերգականը որոշ չափով թեթևացվում է, երբ մարդ գզում է, որ նա պիտի ապրի մահից հետո իր մարդկային ցեղում, իր ստեղծագործական արդյունքների շնորհիվ: Եթե մարդ գզում է, որ նա ապրել է ոչ առանց նպատակի, որ նա իր մահից հետո թողել է լարի գործեր, որոնք մարդկանց համար պետքական և օգտավետ են, ապա նա չի գզում մենակության մեջ, նրա մոտ անձնական մահի պրոբլեմը չի գտնվում առաջին պլանի վրա: Այսպիսի մարդը իր անմահությանը հաստատում է զոմբիի, խիզախությունների անմահության միջոցով, մարդկության նյութական և հոգևոր առաջընթացում, իր մատուցած

ներդրումով: Մանավանդ, երբ մարդ գիտակցված մահվան է գնում հանուն իր Հայրենիքի՝ իր ժողովրդի, հանուն հասարակության առաջընթացի, ապա նա զգում է, որ դրանով իսկ ինքը անմահանում է, քանի որ նա իր կյանքը զոհաբերում է իր ժողովրդին, իր հայրենիքին: Ներկա, ապագա սերունդների ազատ և բարոք կյանքին: Ներկա պայմաններում կարելի է բազմաթիվ օրինակներ բերել դարաբաղյան ազատամարտիկների հերոսական սխրագործություններից, որոնց կատարման ժամանակ նրանք չեն խնայում աշխարհում ունեցած իրենց անենագեղեցիկը՝ կյանքը: Մարդ էական է, որ գիտակցում է, որ անցողիկ է և միաժամանակ նա պայքարում է հավերժության համար, իր կյանքի երկարացման համար: Որպեսզի իր համար թողնի բարի անուն և հիշատակ զալիք սերունդների գիտակցության մեջ: Այն մարդիկ, ովքեր իրենց կյանքում միայն մտածում են և ձգտում են բավարարել իրենց անձնական պահանջներին, այսինքն միայն ապրում են իրենց համար, ապա այդպիսի մարդիկ մահանալուց հետո անհետանում են կյանքում առանց հետք թողնելու: Մարդու կոչումը պահանջում է նրանից, որպեսզի նա իր ամբողջ կյանքում զարգացնի իր ֆիզիկական և մտավոր ուժերը, բոլոր իր ունակությունները և կարողությունները: Կյանքը ուղիղտներում կատարած պայքարի, աշխատասիրության շնորհիվ ձևավորվում են մեծ հոգու տեր մարդիկ, լուսավոր երազանքների մարդիկ, որոնք, գիտակցելով այդ ամենը, ձգտում են ապրել բովանդակալից և նպատակասլաց կյանքով: Այդպիսի մարդկանց ձևավորվում է երևան են զալիս մեծ անհատներ, որոնք պատմության մեջ թողնում են խոր բովանդակալից հետք:

1. А.Фюербах, из. фил.произвед. в двух томах, т.1, М.1955, стр 199
2. Там же, стр.202

*Саркисян С.А.*

## К вопросу о смысле жизни

### Резюме

В статье делается попытка выявить сущность смысла жизни, которая была остается одной из главных проблем философии. Смысл жизни человека проявляется его многогранной деятельности, в течении которой он может расширить свои способности умение и талант. Смысл жизни человека тесно связан с его свободой.

В статье подчеркивается, что смысл жизни более углубляется, когда человек своей трудовой деятельностью активно участвует в деле создания материальных духовных благ, развивая свои физические и духовные ценности.

*Sargisian S.A.*

About the question of meaning[purport] of life.

### Summary

In the article it is made an attempt to reveal [to open, to discover] The meaning [purport] of life, which had always been is still being one of the basic [fundamental] question of philosophy. The meaning of mans Life is dislaed [shown] by his many-sided or pologon activity, during which he can extent his abilities, skills and talent. The meaning of mans Life closely connecteg with his freedom. The meaning [purport] of mans Life becomes deeped, 'w he takes an active parts in creating of material and spiritual wealt-working actively, developig his physical and spiritual values.